1. Բաժանորդը, միանալով Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին, պարտավորվում է մեկ տարի շարունակ մնալ Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի բաժանորդ և.
   - Ինտերնետ ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման պահից սկսած առաջին երկու ամիսների ընթացքում Ծառայությունները ստանում է անվճար,
   - Ստանում է PSG1282N Wi-Fi սարքի (այսուհետ՝ Սարք) անվճար օգտագործման իրավունք (Բաժանորդը կարող է հրաժարվել վերոնշյալ արտոնությունից):
2. Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին հնարավոր է միանալ միայն Օպերատորի վաճառքի և սպասարկման սրահներից կամ Օպերատորի գործընկեր կազմակերպության վաճառքի սրահներից համակարգիչ գնելու դեպքում: Օպերատորի գործընկեր են համարվում բոլոր այն կազմակերպությունները, որոնք կնքել են գործակալական պայմանագիր Օպերատորի հետ:
3. Սարքի անվճար օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթից օգտվելու պարտադիր ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև շարունակվում են Ծառայությունների մատուցման հարաբերությունները, և Սարքն անհրաժեշտ է Բաժանորդի կողմից Ծառայությունները ստանալու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև Ծառայությունների մատուցման հարաբերությունների դադարեցման դեպքում Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:
4. Ինտերնետի այլ սակագնային փաթեթների (բացառությամբ Անլիմ օֆիս ժամկետային սակագնային փաթեթի բաժանորդների) բաժանորդները նույնպես կարող են անցում կատարել Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին և Ծառայություններից օգտվել սույն պայմաններով:

   Եթե Բաժանորդը ցանկանում է դադարեցնել Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի բաժանորդագրությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի բաժանորդագրությունը կհամարվի դադարեցված ընթացիկ պարտքը և այն գումարը, որը Բաժանորդին զիջվել է Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի պայմանների շրջանակներում /կետ 1/ ամբողջությամբ վճարելու և Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի բաժանորդագրության դադարեցման մասին դիմում ներկայացնելու պահից:
5. Եթե Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին միանալիս Բաժանորդն իր ցանկությամբ չի օգտվում Սարքի անվճար օգտագործման իրավունքից, ապա Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի գործողության հետագա ընթացքում այլևս չի կարող օգտվել նշված արտոնությունից:
6. Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի բաժանորդները փաթեթի ակտիվացման պահից սկսած առաջին 4 օրացուցային ամիսների ընթացքում հնարավորություն ունեն փոխել սակագնային փաթեթը՝ անցում կատարելով միայն ավելի մեծ արժեքով Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի:

Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի ակտիվացման պահից սկսած 4-րդ օրացուցային ամսվա ավարտից հետո Բաժանորդները հնարավորություն են ստանում փոխել սակագնային փաթեթը՝ անցում կատարելով թե՛ ավելի մեծ, թե՛ ավելի փոքր արժեքով Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի:

7. Եթե Բաժանորդը կատարել է սակագնային փաթեթի փոփոխություն և միևնույն ամսվա ընթացքում օգտվել է երկու տարբեր Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթներից, ապա տվյալ ամսվա ամսավճարը հաշվարկվում է ըստ օրերի՝ օգտագործած սակագնային փաթեթների ամսավճարների համամասնությամբ:
8. Բաժանորդը կարող է ժամանակավորապես կասեցնել Ծառայությունների մատուցումը՝ Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված կարգով: Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման և/կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթի պարտադիր գործողության ժամկետը երկարաձգվում է կասեցման ժամակահատվածի տևողությամբ:

   Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդը օգտվել է Անլիմ օֆիս ժամկետային+ սակագնային փաթեթից բաժանորդագրության օրվանից սկսած տասներկու օրացուցային ամիս:
9. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:
10. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: